ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# Հ Ր Ա Մ Ա Ն

30 03 2009թ. Երևան № 20

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածը, ղեկավարվելով նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 10-րդ կետերով, 30-րդ հոդվածով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Հաստատել Կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման կրթական ծրագիրը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի պահանջների պահպանման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ա.Դանիելյանի վրա:

3. Հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի համայնքների և կայազորների զինվորական դատախազներին և «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին:

Ա.Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
«30» 03 2009թ.
N 30 հրամանի

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստման**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրի նպատակն է ստորև նախատեսված ուսուցման ձևով (մոդելով) ապահովել կոռուպցիայի վերաբերյալ դատախազների պարբերաբար վերապատրաստումը՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործումը:

## 2. ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

2. Կրթական չափորոշիչի որոշման հիմք են՝

1) GRECO-ի կողմից անցկացված դիտարկման (մոնիտորինգի) արդյունքները, գնահատման առաջին և երկրորդ փուլերի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը արված առաջարկությունները.

2) ՀՀ դատախազության «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության» ծրագիրը.

3) «Կոռուպցիոն հանցագործությունների մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի նոյեմբերի 19-ի N 82 հրամանը:

3. Սույն ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը ներառում է ներպետական և միջազգային իրավական ակտերի իմացության և կոռուպցիայի ոլորտում դատախազությանը վերապահված լիազորությունների իրացումից բխող հարաբերությունները:

4. Ուսումնական գործընթացի հիմքում ընկած են ուսուցման համար անհրաժեշտ այնպիսի ուղղություններ, որոնք մեկ հարցության համատեքստում միմյանց հետ տրամաբանորեն շաղկապված են և բովանդակում են հետևյալ թեմաները՝

1) Կոռուպցիայի հարցերի միջազգային-իրավական կարգավորում.

2) Կոռուպցիայի հարցերի ներպետական իրավական կարգավորում.

3) Մասնագիտացված կազմակերպությունների դերը կոռուպցիայի դեմ պայքարում.

4) Դատախազին վերապահված լիազորությունների իրացման առանձնահատկությունները կոռուպցիայի դեմ պայքարում.

5) Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական որակման առանձնահատկությունները:

5. «Կոռուպցիայի հարցերի միջազգային-իրավական կարգավորում» բաժնի շրջանակում դատախազը ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության 2004թ. հունիսի 8-ին վավերացրած Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան, 2004թ. դեկտեմբերի 8-ին վավերացրած «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, 2006թ. հոկտեմբերի 23-ին վավերացրած «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան և կոռուպցիայի մասին Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի որոշումները, բանաձևերն ու հանձնարարականները:

6. «Կոռուպցիայի հարցերի ներպետական իրավական կարգավորում» բաժնի շրջանակում դատախազը ուսումնասիրում է ՀՀ Կառավարության 2003թ. «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագիրը և 2009թ. «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագրի նախագիծը, ինչպես նաև ՀՀ դատախազության «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության» ծրագիրը:

7. «Մասնագիտացված կազմակերպությունների դերը կոռուպցիայի դեմ պայքարում» բաժնի շրջանակում դատախազը ուսումնասիրում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և դրան առընթեր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման դիտորդման (մոնիտորինգի) հանձնաժողովի գործունեությունը:

8. «Դատախազին վերապահված լիազորությունների իրացման առանձնահատկությունները կոռուպցիայի դեմ պայքարում» բաժնի շրջանակում դատախազը ուսումնասիրում է եկամուտների պարտադիր հայտարարագրման և պաշտոնատար անձանց կողմից նվերներ ստանալու հետ կապված հարաբերությունների վերաբերյալ իրավական հիմքերը, դատախազի վարքագծի կանոնագիրքը, դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացը, կոռուպցիոն հանցագործություններով դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության մարտավարության ու ապացույցների հետազոտման կարգի առանձնահատկությունները:

9. «Կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական որակման առանձնահատկությունները» բաժնի շրջանակում դատախազը ուսումնասիրում է պաշտոնական դիրքն օգտագործելով սեփականության, տնտեսական գործունեության, արդարադատության, զինվորական ծառայության կարգի և պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ տեսությունում առկա մեկնաբանությունները, գիտական հետազոտությունների արդյունքները և պրակտիկայում ձևավորված մոտեցումները, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան:

## 3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ

10. Վերապատրաստման գործընթացն իրականացվում է ինքնակրթության և համապատասխան նյութի շրջանակում կազմակերպված գործնական պարապմունքի միջոցով:

## 4. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

11. Ինքնակրթությունը կազմակերպվում է էլեկտրոնային ուսուցման մեթոդով՝ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ դպրոց):

12. Էլեկտրոնային ուսուցման կազմակերպման և անցկացման հետ կապված ուսումնական ձեռնարկի թղթային ու էլեկտրոնային տարբերակները մշակում և կազմում է դպրոցը:

13. Գործնական պարապմունքն անցկացվում է ինքնակրթությունից անմիջապես հետո, ուսուցված նյութի շուրջ դպրոցում կազմակերպված սեմինար քննարկումների միջոցով:

14. Սեմինար քննարկումներին որպես մասնակիցներ ներգրավվում են տեսաբաններ և գործնական աշխատողներ:

## 5. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ

15. Ուսումնառության տևողության ընդհանուր ժամաքանակը հավասար է դատախազների տարեկան վերապատրաստման համար նախատեսված 24 դասաժամին, որից՝

1) 16 ժամը, երկու օրվա ընթացքում, նախատեսված է ինքնակրթության համար.

2) 8 ժամը, մեկ օրվա ընթացքում, նախատեսված է սեմինար քննարկումների համար:

## 6. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

16. Սույն կրթական ծրագիրն իրականացվում է փուլերով՝ դատախազների տարեկան վերապատրաստման կրթական ծրագրի շրջանակում:

17. Համապատասխան փուլերի քանակը որոշվում է կրթական ծրագրի բովանդակության ընդհանուր ծավալի և ուսումնասիրման նպատակով՝ սույն ծրագրով ինքնակրթության համար նախատեսված ուսումնառության ժամանակամիջոցում ուսուցման համար անհրաժեշտ նյութի ծավալի հարաբերակցությամբ:

18. Փուլային հաջորդականությունն իրականացվում է տարեկան կտրվածքով՝ տարին մեկ անգամ:

19. Սույն կրթական ծրագրով նախատեսված ուսումնառության ժամանակահատվածը հաշվվում է դատախազների տարեկան վերապատրաստման ուսումնառության ժամկետում: